ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<08>> փետրվարի 2022թ. N ՄՊ/82-2022

ք. Արմավիր

## «ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՇՄԱՎՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և «Ոսկեհատի միջնակարգ դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սյուզաննա Շմավոնյանի 2022 թվականի փետրվարի 3-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սյուզաննա Շմավոնյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2022 թվականի փետրվարի 14-ից մարտի 21-ը ներառյալ՝ 25 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Սյուզաննա Շմավոնյանի արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սոֆիկ Պետրոսյանին:
3. Սյուզաննա Շմավոնյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի մարտի 22-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись ԷԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

X

VERIFIED OCSP 08.02.2022 16:08:45 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505